



PEARLS OF ARMENIAN HERITAGE

Կրօնաշունչ Բանաստեղծութիւնը

Մեր կրօնական բանաստեղծութեան մէջ բացառիկ արժէք կը ներկայացնեն **Շարականները**:

Հայերէն շարական բառին ծագման մասին շատ տարբեր տեսութիւններ եւ բացատրութիւններ տրուած են. ստոյգ ծագումը հետեւեալն է. սանսկրիտ **սրի** արմատէն –իմաստը՝ ընթացք, շարժում– կազմուած **սարանի** եւ **սարանգա** բառերուն նման է, որոնք կը նշանակեն, առաջինը՝ ոտանաւոր բանաստեղծութիւն, իսկ երկրորդը՝ երաժշտական յատուկ կշռոյթ: Նոյն **սրի** արմատը կայ պարսկերէն **սարքաշ** կամ **շիրին** (երգիչ) բառերուն մէջ: Հայերէն բառը կազմուած է նման Աւետայի **ափրինական** (օրհնութիւն) բառին, **ծիսական երգի** իմաստով՝ **շար** (երգ, կշռութաւոր բանաստեղծութիւն) եւ **–ական** ածանցով:

Շարականները քնարերգակ քերթուածներ են, յօրինուած՝ երգելու համար, ուստի ունին չափական կշռոյթ եւ յատուկ օրէնքներ, ըլլայ երաժշտական, ըլլայ գրութեան մէջ:

Հայերէն լեզուին ձայնական երրեակ աստիճանի երկարութիւնը, ինչպէս նաեւ նախադասութեան ուրոյն շեշտաւորումը, մեր բանաստեղծութեան արուեստին կու տան կշռոյթի եւ ամանակի լայն ընտրութիւն: Ընտիր արուեստով եւ քաջ լեզուագիտութեամբ յօրինուած շարականները սքանչելի գոհարներ են նկարագրական ճկունութեան եւ զգացումներու յորձանուտ ընթացքին:

Հոփսիսմեան կոյսերուն ի պատիւ Կոմիտաս Կաթողիկոսին գրած շարականը բարձր օրինակ մըն է այս իրականութեան. ձայնաւորներուն երկարութիւնը լսելու համար՝ պէտք է երգել զայն, ո՛չ միայն կարդալ.

*Դարձեալ–վերստին / արարչագործ–զօրութիւն
եւ դարձեալ–Եդեմ / աստուածապունկ–զարդարի,
Քանզի ծառըն կենաց / տնկեցաւ ի դրախտին
Բերելով–մեզ պտուղ / զերանելին Հոփսիսմէ:*

Տաղերը եւ **Գանձերը** կը կազմեն իրենց յատուկ խումբը մեր կրօնական բանաստեղծութեան մէջ. շարականներէն աւելի ազատ կերպի կը հետեւին, որ իրենց կու տայ ճկունութիւն՝ արտայայտելու զգացումներու աւելի ընդարձակ սանդուղ մը:

Վարպետ տաղերգուներ են Գրիգոր Նարեկացին եւ Ներսէս Շնորհալին ու երէց եղբայրը՝ Գրիգոր Կաթողիկոս, որուն հեղինակութիւնն է—խօսք եւ երաժշտութիւն—Ջրօրհնէքի “Այսօր ձայնըն Հայրական” գեղեցիկ տաղը:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

